ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2020/07

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն

Բողոք բերող՝ «Գարանտսերվիս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Գարանտսերվիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի, Ա. Պարանյանի, Ա. Գրիգորյանի

ՀՀ ոստիկանության ներկայացուցիչներ՝ Ա. Մնացականյանի, Ա. Չերքեզյանի

ՀՀ պետական վերահսկողական ծառայության ներկայացուցիչ՝ Մ. Սահակյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-ՏՍԿ-ՃՈ-2020/Ա-22» ծածկագրով գնանշման հարցում, ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն)

կողմից 30.01.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է Պարտավորեցնել ՀՀ ոստիկանության կարիքների համար՝ «Ավտոմեքենաների վերանորոգման» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-ՏՍԿ-ՃՈ-2020/Ա-22» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 25.12.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ՝ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 30.01.2020թ.-ին և նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ ու 30.01.2020թ.-ին հրապարակվել www.gnumner.am կայքում:

05.02.2020թ.-ին և 13.02.2020թ.-ին նշանակվել և անցկացվել են նիստեր:

05.02.2020թ.-ի Պատվիրատուի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 07.02.2020թ.-ի թիվ ԲՔԱ-ԼՕ/1/1555-2020 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավվել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը:

Բողոքի քննությունն ավարտվել է 13.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 21.02.2020թ.-ին:

2. «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գարանտսերվիս» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության կարիքների համար՝ «Ավտոմեքենաների վերանորոգման» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-ՏՍԿ-ՃՈ-2020/Ա-22» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի 4-րդ՝ «Հայտը ներկայացնելու կարգը» վերտառությամբ բաժնի՝ 4.3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին.

բ) հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին.

գ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

դ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

ե) այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն ենթակետում մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը, որը հայտերը բացելուց հետո ավտոմատ եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում.

2) իր կողմից հաստատված գնային առաջարկ.

4) գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով:

5) համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Ընդ որում համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) սույն ընթացակարգին մասնակցելու դեպքում՝

•համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող սույն ընթացակարգին (միևնույն չափաբաժնին) ներկայացնել առանձին հայտ: Սույն պարբերության պահանջի չպահպանման դեպքում հայտերի բացման նիստում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը.

•եթե համատեղ գործունեության պայմանագրով սահմանված է, որ մասնակիցների ընդհանուր գործերը վարում է համատեղ գործունեության պայմանագրի առանձին մասնակից, ապա հայտը ներկայացվում, իսկ պայմանագիր կնքվելու դեպքում վճարումները կատարվում են այդ մասնակցին: Այն դեպքում, երբ համատեղ գործունեության պայմանագրով նախատեսվում է, որ ընդհանուր գործերը վարելիս յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի գործել բոլոր մասնակիցների անունից, ապա պայմանագիր կնքվելու դեպքում դրա հիման վրա վճարումները կատարվում են հայտը ներկայացրած մասնակցին:

Ընթացակարգի պայմանագրի նախագծին կից հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագրով սահմանվել է հետևյալը.

“….Կատարողը պետք է ունենա անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և մասնագիտական անձնակազմ, այդ թվում՝

…. Ավտոտեխսպասարկման կայանում կիրառվող չափման համար նախատեսված բոլոր տեսակի ծավալային տարաները պետք է լինեն ստուգաչափված (ստուգաչափումը հավաստող փաստաթղթերը պետք է ներառված լինեն հայտում և կցված լինեն սույն հրավերի հավելված 1-ին՝ հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմումին (հիմք՝ ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 11-ի N 113-Ն որոշում)), ընդ որում՝ ստուգաչափումը պետք է իրականացված լինի մինչև սույն հրավերով սահմանված հայտերի բացման վերջնաժամկետը”:

Վերը նշված ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել նաև “Ֆլեշ Մոտորս” ՍՊԸ–ն /102,545,950 ՀՀ դրամ գնային առաջարկ/ և “Գարանտսերվիս” ՍՊԸ-ն /77,270,000 ՀՀ դրամ գնային առաջարկ/, տարբերությունը մոտ 25 մլն. ՀՀ դրամ:

“Գարանտսերվիս” ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացվել է Ընթացակարգի հրավերի 4.3-րդ կետով ներկայացված բոլոր փաստաթղթերը:

Սույն Ընթացակարգով հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 19.12.2019թ.:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.12.2019թ. թվագրված հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրության 3 կետի համաձայն՝ ““Գարանտսերվիս” ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 9-րդ կետով նախատեսված՝ տարաների ստուգաչափման փաստաթուղթը: 23.12.2019թ. “Գարանտսերվիս” ՍՊԸ-ն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն 24.12.2019թ. վերջինիս կողմից ներկայացված փաստաթուղթը չի համապատասխանել հրավերի պահանջներին, քանի որ հրավերով պահանջվում էր, որ ավտոտեխսպասարկման կայանում կիրառվող չափման համար նախատեսված բոլոր տեսակի ծավալային տարաները պետք է լինեն ստուգաչափված /ստուգաչափումը հավաստող փաստաթղթերը պետք է ներառված լինեն հայտում և կցված լինեն սույն հրավերի հավելված 1-ին՝ հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմումին /հիմք՝ ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 11-ին թիվ 113-Ն որոշում/, ընդ որում՝ ստուգաչափումը պետք է իրականացված լինի մինչև սույն հրավերով սահմանված հայտերի բացման վերջնաժամկետը/:

Սակայն “Գարանտսերվիս” ՍՊԸ-ի կողմից փաստաթուղթը ներկայացվել է շտկման ամսաթվով /փաստաթուղթը կցվում է/, որով խախտվել է հրավերի պահանջը: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ “Գարանտսերվիս” ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվում է”:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.12.2019թ. թվագրված հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրությունը հրապարակվել է www.gnumner.am կայքում 2020թ. հունվարի 13-ին, ժամը 19:00-ին:

“Գարանտսերվիս” ՍՊԸ-ի կողմից 24.12.2019թ. գնահատող հանձնաժողովին ներկայացվել է “Չափագիտության ազգային ինստիտուտ” ՓԲԸ-ի կողմից տրված թիվ 026471 ստուգաչափման վկայականը, որի համաձայն՝ ստուգաչափումը իրականացվել է 24.12.2019թ.:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-ՏՍԿ-ՃՈ-2020/Ա-22» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից սույն ընթացակարգի շրջանակներում թույլ են տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրության մի շարք նորմերի խախտումներ, ինչը հանգեցրել է "Գարանտսերվիս" ՍՊԸ-ի իրավունքների խախտմանը, մասնավորապես.

"Գնումների մասին" ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Վերը նշված Ընթացակարգի հայտերի բացումը տեղի ունեցել 19.12.2019թ., սակայն հայտերի բացման նիստի արձանագրությունը թվագրվել է 25.12.2019թ., իսկ հրապարակվել տեղեկագրում միայն 13.01.2020թ. աշխատանքային ժամի ավարտից հետո:

Վերոհիշյալի արդյունքում ստացվում է, որ հայտերի բացման նիստը սխալ ամսաթվով է հրավիրվել, քանի որ հայտերի բացումը, ըստ Ընթացակարգի հրավերի, պետք է տեղի ունենար 19.12.2019թ., սակայն հայտերի բացման նիստի արձանագրությունը (այդպիսի անվանում է կրում տվյալ արձանագրությունը) թվագրված է 25.12.2019թ.:

Ակնհայտ է, որ հայտերի բացման նիստի արձանագրությունը պետք է թվագրված լիներ 19.12.2019թ.: Եթե 25.12.2019թ. հրավիրված գնահատող հանձնաժողովի նիստը հանդիսացել է հայտերի գնահատման նիստ, ապա այդ դեպքում ու±ր է 19.12.2019թ. հայտերի բացման նիստի արձանագրությունը:

Այնուամենայնիվ, անկախ այն հանգամանքից, թե 25.12.2019թ. կազմված նիստի արձանագրությունը հանդիսանում է հայտերի բացման, թե հայտերի գնահատման նիստի արձանա-գրություն, «Գնումների մասին» ՀՀ օրենքի թե՛ 33, և թե՛ 34-րդ հոդվածը պահանջում են, որ հայտերի բացման /գնահատման/ նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվի տեղեկագրում, ինչը տվյալ դեպքում չի կատարվել:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից նշված Ընթացակարգի արդյունքների ամփոփումը և հաղթող մասնակից որոշելը կատարվել է 27.12.2019թ. հրավիրված նիստի ժամանակ, այդ նիստի արձանագրության 3-րդ կետով ընդունվել է որոշում պայմանագիր կնքելու մասին և սահմանվել, որ անգործությունը կհայտարարվի պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարությունը www.gnumner.am կայքում հրապարակվելուց հետո: Սակայն նշված արձանագրությունը հրապարակվել է կայքում միայն 13.01.2020թ., իսկ պայմանագիր կնքելու մասին 27.12.2019թ. ընդունված որոշման մասին հայտարարությունը հրապարակվել է www.gnumner.am կայքում միայն 22.01.2020թ., այսինքն որոշումը կայացնելուց գրեթե մեկ ամիս հետո: Վերոհիշյալից ակնհայտ է, որ խախտվել են բոլոր ողջամիտ ժամկետները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ մի շատ կարևոր հանգամանք. Ընթացակարգի հրավերի 4-րդ՝ «Հայտը ներկայացնելու կարգը» վերտառությամբ բաժնի՝ 4.3-րդ կետը սպառիչ թվարկում է այն բոլոր փաստաթղթերը, որոնք մասնակիցները հայտով պարտավոր են ներկայացնել: Փաստաթղթերի ցանկի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մասնակցի վրա դրված չէ պարտավորություն հայտով ներկայացնելու ստուգաչափումը հավաստող փաստաթուղթը: Ավելին, ստուգաչափումը հավաստող փաստաթղթի մասին Ընթացակարգի հրավերը խոսում է միայն Ընթացակարգի պայմանագրի նախագծին կից հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագրում, որտեղ ամրագրվում է, որ ԿԱՏԱՐՈՂԸ (ոչ հայտատուն, այլ հաղթող մասնակիցը, ում հետ արդեն կնքվել է պայմանագիր) պետք է ունենա ստուգաչափումը հավաստող փաստաթղթերը, իսկ ավտոտեխ-սպասարկման կայանում կիրառվող չափման համար նախատեսված բոլոր տեսակի ծավալային տարաները պետք է լինեն ստուգաչափված: Փաստորեն նման պայմաններում գնահատող հանձնաժողովը կիրառելով Կարգի 41-րդ կետի պահանջները, ըստ էության, իրավունք չուներ "Գարանտսերվիս" ՍՊԸ-ին ներկայացնել շտկում կատարելու պահանջ, քանի որ ՍՊԸ-ն հայտով ներկայացրել էր այն բոլոր փաստաթղթերը, որոնք սահմանված էին հրավերի 4.3-րդ կետով: Ենթադրում ենք, որ նման պարագայում հանձնաժողովը ղեկավարվել է Ընթացակարգի պայմանագրի նախագծին կից հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագրի այն պահանջով, որի համաձայն՝ ստուգաչափումը հավաստող փաստաթղթերը պետք է ներառված լինեն հայտում և կցված լինեն սույն հրավերի հավելված 1-ին՝ հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմումին: Սակայն այս դեպքում առաջանում է երկու խնդիր. նախ, ինչու այս փաստաթուղթը նշված չէ Հրավերի 4.3-րդ կետում հայտով ներկայացված փաստաթղթերի ցանկում, և երկրորդ, ինչու հայտով փաստաթուղթ ներկայացնելու պահանջը ամրագրված է այն հատվածում, որը վերաբերում է պայմանագիրը կատարողի կողմից պայմանագրի կատարմանը նվիրված բաժնին:

Փաստորեն այս տեսանկյունից մենք կարող ենք արձանագրել Ընթացակարգի հրավերի երկու տարբեր հատվածների միջև հակասություն:

Եվ վերջապես, ամենակարևորը.

Ինչպես արդեն նշել ենք, Ընթացակարգի պայմանագրի նախագծին կից հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագրով սահմանվել են ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման կայանից պահանջվող տեխնիկական պահանջները.

Մասնավորապես, Կատարողը պետք է ունենա անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և մասնագիտական անձնակազմ, այդ թվում՝

…. Ավտոտեխսպասարկման կայանում կիրառվող չափման համար նախատեսված բոլոր տեսակի ծավալային տարաները պետք է լինեն ստուգաչափված (ստուգաչափումը հավաստող փաստաթղթերը պետք է ներառված լինեն հայտում և կցված լինեն սույն հրավերի հավելված 1-ին՝ հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմումին (հիմք՝ ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 11-ի N 113-Ն որոշում)), ընդ որում՝ ստուգաչափումը պետք է իրականացված լինի մինչև սույն հրավերով սահմանված հայտերի բացման վերջնաժամկետը:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ "Գարանտսերվիս" ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 9-րդ կետով նախատեսված՝ տարաների ստուգաչափման փաստաթուղթը: 23.12.2019թ. "Գարանտսերվիս" ՍՊԸ-ն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու համար, սակայն 24.12.2019թ. վերջինիս կողմից ներկայացված փաստաթուղթը չի համապատասխանել հրավերի պահանջներին, քանի որ հրավերով պահանջվում էր, որ ավտոտեխսպասարկման կայանում կիրառվող չափման համար նախատեսված բոլոր տեսակի ծավալային տարաները պետք է լինեն ստուգաչափված /ստուգաչափումը հավաստող փաստաթղթերը պետք է ներառված լինեն հայտում և կցված լինեն սույն հրավերի հավելված 1-ին՝ հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմումին /հիմք՝ ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 11-ին թիվ 113-Ն որոշում/, ընդ որում՝ ստուգաչափումը պետք է իրականացված լինի մինչև սույն հրավերով սահմանված հայտերի բացման վերջնաժամկետը/:

Փաստորեն մասնակցի հայտը մերժվել է այն հիմքով, որ այն տարաները, որով կատարողը պետք է իրականացնի իր պայմանագրային պարտավորությունների մի մասը, անցել են ստուգաչափում և դրանց վերաբերյալ իրավասու մարմնի կողմից տրվել է ստուգաչափման փաստաթուղթ ոչ թե հայտերի բացման վերջնաժամկետի ամսաթվով՝ 19.12.2019թ., այլ շտկում կատարելու ամսաթվով՝ 24.12.2019թ.:

Հարգելի գնումների հետ կապված բողոքներ քննող անձ, այս հարցը քննելիս՝ խնդրում ենք նկատի ունենալ, որ ԿԱՏԱՐՈՂԻՆ ստուգաչափում անցած տարան անհրաժեշտ է լինելու միայն իր պայմանագրային պարտավորության կատարման փուլում, ինչը ամրագրված է հենց Ընթացակարգի պայմանագրի նախագծին կից հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագրով, որտեղ խոսքը գնում է կոնկրետ պայմանագրի կատարողի

մասին, և մասնակցի հայտը մերժել այն հիմնավորմամբ, որ ստուգաչափման փաստաթուղթը ամսագրված է ոչ թե մինչև հայտերի բացման վերջնաժամկետի ամսաթվով՝ 19.12.2019թ., այլ շտկում կատարելու ամսաթվով՝ 24.12.2019թ., գտնում ենք իրավաչափ չէ հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում՝ գտնում ենք, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք

հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումներից ուղղակի հետևում, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (Հրավերի 4.3. կետով ամրագրված ցանկում նշված չէ ստուգաչափման փաստաթուղթը):

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Փաստացիորեն, ստուգաչափման փաստաթուղթը անհրաժեշտ է լինելու ոչ թե հայտատուին, այլ պայմանագրի կատարողին՝ պայմանագրի կատարման փուլում ստուգաչափված տարայով ծառայություն մատուցելու համար, ուստի դեռևս հայտերի գնահատման փուլում ստուգաչափման ամսաթվի տարբերությունը, մեր կարծիքով, հիմք չէր կարող հանդիսանալ հայտը մերժելու համար:

Ինչ վերաբերում է գնահատող հանձնաժողովի կողմից վկայակոչված ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 11-ի N 113-Ն որոշմանը, ապա վերոհիշյալ որոշման ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ որոշմամբ ընդամենը սահմանված է

սպուգաչափում անցնելու անհրաժեշտության մասին, այլ ոչ թե սպուգաչափումը մինչև հայտերի բացման վերջնաժամկետը անցնելու անհրաժեշտության մասին:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով բառերի և ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի իրավական ակտի դրույթներից, նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Այսպիսով, հիմք ընդունելով սույն բողոքով նշված փաստական հանգամանքները՝ գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի կողմից "Գարանտսերվիս" ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և ապա մերժելու մասին որոշումը չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից և միտված չէ ապահովելու գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացմանն ու պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը:

Այսպիսով, հայտը մերժելու նշված որ իրավաչափ հիմքի պայմաններում գնահատող հանձնաժողովը մերժել է մոտ 25.000.000 ՀՀ դրամով ավելի էժան գնային առաջարկ ներկայացրած ընկերության հայտը:

Լրացուցիչ փաստարկ տարայի չափագրում անցնելու փաստաթղթի վերաբերյալ

Սույն բողոքը քննելիս, խնդրում ենք նկատի ունենալ, որ "Գարանտսերվիս" ՍՊԸ-ն պայմանագրում նկարագրված ծառայությունները մատուցելու էր "ԻնգլիշԹրեյդ Հաուզ" ՍՊԸ-ի կողմից իրեն մատակարարած շարժիչի և տրանսմիսիոն յուղերի օգնությամբ, ընդ որում, "ԻնգլիշԹրեյդ Հաուզ" ՍՊԸ-ի կողմից մատակարարված շարժիչի և տրանսմիսիոն յուղերի տարաները արդեն իսկ մակնիշված են՝ ըստ համապատասխան ծավալների, այսինքն տարաները անցած են համապատասխան սպուգաչափում:

"ԻնգլիշԹրեյդ Հաուզ" ՍՊԸ-ն 14.01.2019թ. և 24.01.2020թ. "Գարանտսերվիս" ՍՊԸ-ին ուղղված գրություններով /կցվում են/ հայտնել և հավաստել է, որ իր կողմից մատակարարված ապրանքը համապատասխանում է պիտակների վրա հայտարարված ծավալներին՝ ըստ 1510-84 ԳՈՍՏ-ի: 24.01.2020թ. գրությանը կցվել է նաև ապրանքը արտադրող ընկերության՝ UAB "SCT LUBRICANTS" նույն բովանդակության հայտարարությունը /կցվում է/:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող

հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:»:

Ելնելով վերոգրյալներից, «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով խնդրել է Պարտավորեցնել ՀՀ ոստիկանության կարիքների համար՝ «Ավտոմեքենաների վերանորոգման» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-ՏՍԿ-ՃՈ-2020/Ա-22» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 25.12.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ՝ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 01.02.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-Լ0/1/1030-2020 գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից 30.01.2020թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստերին, ներկայացրել է գրավոր դիրքորոշում և հայտնել հետևյալը.

«ՀՀ ոստիկանության կարրիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 03.12.2019 թվականին հրապարակվել է ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-ՏՍԿ-ՃՈ-2020/Ա-22 ծածկագրով հրատապ բաց մրցույթ /այսուհետ՝ ընթացակարգ/: Ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 19.12.2019 թվականին: Ընթացակարգին հայտ են ներկայացրել երկու մասնակից՝ Գարանտսերվիս ՍՊԸ-ն և Ֆլեշ մոտորս ՍՊԸ-ն /մասնակիցների հայտերը կցվում են/ : Գարանտսերվիս ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված բողոքում նշում է,որ հայտ ներկայացրած երկու կազմակերպությունների կողմից երկայացված գնային առաջարկների տարբերությունը կազմել է մոտ 25 000 000

/քսանհինգ միլիոն ՀՀ դրամ: Հարկ եմ համարում նշել, որ Ֆլեշ մոտորս ՍՊԸ-ն ներկայանալով բանակցությունների, իր կողմից հայտով ներկայացված 102 545 950 /մեկ հարյուր երկու միլիոն հինգ հարյուր քառասունհինգ հազար ինը հարյուր հիսուն/ ՀՀ դրամից կատարել է նվազեցում մինչև 77 000 000 /յոթանասունյոթ միլիոն/ ՀՀ դրամ: Կարծում եմ այս պարագայում ՀՀ ոստիկանությունը կարողացել է լիարժեք ապահովել գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը, անգամ այն պարագայում, երբ բանակցություններին մասնակցել է միայն Ֆլեշ մոտորս ՍՊԸ-ն՝ այդ պահին լինելով ընթացակարգի շրջանակներում հրավերի ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացված միակ մասնակիցը:

Հրավերի անբաժանելի մաս կազմող ընթացակարգի հրավերի 6-րդ հավելվածով ներկայացված պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների 9-րդ կետով պահանջվել է, որ «ավտոտեխսպասարկման կայանում կիրառվող չափման համար նախատեսված բոլոր տեսակի ծավալային տարաները պետք է լինեն ստուգաչափված(ստուգաչափումը հավաստող փաստաթղթերը պետք է ներառված լինեն հայտում և կցված լինեն սույն հրավերի հավելված 1-ին՝ հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմումին(հիմք՝ ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 11-ի N 113-Ն որոշում)), ընդ որում՝ ստուգաչափումը պետք է իրականացված լինի մինչև սույն հրավերով սահմանված հայտերի բացման վերջնաժամկետը»: Գարանտսերվիս ՍՊԸ-ի կողմից հայտով չի ներկայացվել պահանջվող փաստաթուղթը և 23.12.2019թվականին Գարանտսերվիս ՍՊԸ-ն armpes համակարգի ոչ ավտոմատ ծանուցում դաշտով ծանուցվել է հայտով ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանությունը շտկելու համար: 24.12.2019 թվականին Գարանտսերվիս ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է պահանջվող ստուգաչափման վկայականը, սակայն ստուգաչափման վկայականը եղել է թվագրված 24.12.2019 ամսաթվով: Հրավերում հստակ նշված է եղել, որ տվյալ վկայականը պետք է ներկայացվի հայտով և հատուկ հղում է արվել, որ ստուգաչափումը պետք է իրականացված լինի մինչև սույն հրավերով սահմանված հայտերի բացման վերջնաժամկետը, ինչպես հարկ եմմ համարում նշել, որ տվյալ վկայականը կարելի է ստանալ միայն այն պարագայում, երբ վկայական տվող մարմին ներկայացնում են լրիվ նոր, չօգտագործված տարաներ, որոնք անցնում են համապատասխան փորձակումներ, որից հետո միայն տրվում է ստուգաչափումը հավաստող վկայականը: Նշեմ, որ ընթացակարգի հրավերի հավելված 1-ով ներրկայացված դիմում հայտարարության մեջ մասնակիցը հայտարարում և հավաստում է, որ

բավարարում է ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-ՏՍԿ-ՃՈ-2020/Ա-22 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում: Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը Գարանտսերվիս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված Հավելված 1-ով կատարված հայտարարությունը համարել է իրականությանը չհամապատասխանող, քանի որ փաստացի մասնակիցը հայտը ներկայացնելու պահին չունենալով տրվալ փաստաթուղթը չի համապատասխանել հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակցույցով սահմանված պահանջներին:

Հարկ եմ համարում նշել հետևյալը, որ հրավերն ուսումնասիրելիս հանդիպում ենք հետևյալ նախադասությանը.

- «Հարգելի մասնակից նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:»

Վերոգրյալ նախադասության միտքը վերծանելիս բառացի հասկացվում է, որ նախքան հայտ կազմկեը պետք է մանրամասնորեն ուսումնասիրել հրավերը, քանի որ, հիակառակ դեպքում հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման: Յուրաքանչյուր մասնակից ցանկացած հրավերին մասնակցելուց առաջ նախ և առաջ պետք է ուսումնասիրի տվյալ ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը, քանի որ տեխնիկական բնութագրին համապատասխանելուց հետո միայն նա կարող է մտածել հրավերի մնացած կետերն ուսումնասիրելու և պահանջվող փաստաթղթերը հավաքագրելու ու ներկայացնելու մասին: Նշվածի մասին փաստում է Ընթավակարգի հրավերի 1-ին մասի 1-ին գլխի 1.1 կետում նշված նախադասությունը. «Ծառայության տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 3 հավելվածում»: Փաստորեն, Գարանտսերվիս ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից ներկայացված այն փաստարկը, որ նշված կազմակերպության կողմից ուսումնասիրվել է հրավերի տեքստային մասը, որի պատճառով թերի է ուսումնասիրվել տեխնիկական բնութագիրը, այսինքն նրանց կողմից ուսումնասիրվել է միայն Ընթավակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ գլխի 4.3 կետի պահանջները, կարելի է համարել ուղղակի արդարացում Գարանտսերվիս

ՍՊԸ-ի կողմից թույլատրված թերացման համար, որի հետևանքով ընկերությունը կանգնել է հայտի մերժման խնդրի առջև:

Գարանտսերվի ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքում նշվում է հետևյալը. «Ընթացակարգի պայմանագրի նախագծին կից հավելված 1-ի տեխնիկական բնութագրով սահմանվել է հետևյալը, որ կատարողը /ոչ հայտատուն, այլ հաղթող մասնակիցը, ում հետ արդեն կնքվել է պայմանագիր/ պետք է ունենա ստուգաչափումը հավաստող փաստաթղթեր, իսկ ավտոտեխսպասարկման կայանում կիրառվող չափման համար նախատեսված բոլոր տեսակի ծավալային տարաները պետք է լինեն ստուգաչափված»: Ուսումնասիրենք տվյալ պայմանագրի տեխնիկական բնութագիրը, որը ներկայացնում եմ ստորև՝

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ճանապարհային ոստիկանության տñ³Ýëåáñï³ÛÇÝ ÙÇçáóÝ»ñÇ ï»ËÝÇÏ³Ï³Ý ëå³ë³ñÏÙ³Ý Í³é³ÛáõÃÛáõÝ, հինգ տեղանոց առջևի և հետևի տանող բերող մարդատար ավտոմոբիլների

Տոյոտա Կորոլլա-	325	հատ
Տոյոտա Պրադո	14	հատ
Տոյոտա Յարիս	8	հատ

Տեխնիկական սպասարկման ընթացքում կատարվելու է SU – 1 ծառայություն / տեխ. զննում ,ըստ հավելվածի/

SU – 2 ծառայություն/ տեխ.սպասարկում և վերանորոգում, ըստ հավելվածի/:

<u>Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման կայանից պահանջվող տեխնիկական պահանջներ</u>

1.Կատարողը պետք է ունենա անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և մասնագիտական անձնակազմ, այդ թվում՝

1.1 սպասարկման տարածքում ավտոպահեստամասերի պահեստի կամ խանութի առկայություն,

1.2 պետք է ունենա վերանորոգման համար անհրաժեշտ բոլոր արտադրամասերը (ընթացամասի, էլեկտրականության, յուղման, անվաբացքի կարգավորման, վուլկանացման, ինժեկտորի վերանորոգման, ղեկային մասի, փոխանցման տուփի և կամրջակների վերանորոգման, ինչպես նաև մեքենայի ախտորոշման և այլ անհրաժեշտ սարքավորումներ և ծառայություններ):

2. Պատվիրատուի ավտոմեքենան տեխնիկական սպասարկման կայան ժամանելուց հետո Կատարողը պետք է ապահովի ավտոմեքենայի արտահերթ սպասարկում՝ ժամանելու պահից առավելագույնը 30 (երեսուն) րոպե հետո, որից անմիջապես հետո Կատարողը մեկ ժամվա ընթացքում պետք է ապահովի ավտոմեքենայի ախտորոշումը՝ տրամադրելով ավտոմեքենայի վրա իրականացվելիք աշխատանքների, երաշխիքների, դրանց կատարման ժամկետների մասին տեղեկանք (տեղեկանքում ներառվող ծառայությունները պետք է համապատասխանեն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ցանկին՝ SU 1, SU 2), ընդ որում՝ աշխատանքների կատարման ավարտի համար նախատեսված առավելագույն ժամկետը չի կարող ավել լինել 2 օրից, բացառությամբ այն դեպքերի, երբ Կատարողը Պատվիրատուին տրամադրում է տեղեկանք-հիմնավորում ծառայությունների մատուցումը 2 (երկու) օր անհնարին լինելու վերաբերյալ, որի մասով Պատվիրատուի կողմից սահմանվում է ծառայությունների մատուցման խելամիտ ժամկետ:

3. Ավտոմեքենան տեխնիկական կայան ժամանելուց՝ առավելագույնը 1(մեկ) ժամ 30(երեսուն) րոպե հետո, պետք է սկսվի ավտոմեքենայի սպասարկման գործընթացը(ծառայությունների մատուցումը):

4.Կատարողը պետք է կարողանա միաժամանակ սպասարկել առնվազն թվով 15(տասնհինգ) ավտոմեքենա և ունենա առնվազն 5(հինգ) հատ ամբարձիչ:

5. Կատարողի կողմից սպասարկումը պետք է իրականացվի աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 18:00-ն ընկած ժամանակահատվածում:

6. Կատարողը պետք է ունենա առնվազն թվով 15(տասնհինգ) ավտոմեքենայի համար նախատեսված կայանման(պահպանման) վայր, ընդ որում ավտոմեքենաների այնտեղ գտնվելու ամբողջ ընթացքում՝ Կատարողի կողմից պետք է իրականացվի շուրջօրյա (24 ժամ) տեսահսկման և պահակային հսկողություն և այդ ընթացքում իրականացված տեսաձայնագրությունը պետք է պահպանվի առնվազն 30(երեսուն) օր և պահանջի դեպքում 1(մեկ) աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվի Պատվիրատուին:

7. Փոխարինված ավտոմասերը պահանջի դեպքում՝ մեկօրյա ժամկետում, պետք է վերադարձվեն Պատվիրատուի ներկայացուցչին:

8. Նորոգման ծառայությունները պետք է իրականացվեն կից ներկայացված ցանկին համապատասխան:

9. Ավտոտեխսպասարկման կայանում կիրառվող չափման համար նախատեսված բոլոր տեսակի ծավալային տարաները պետք է լինեն ստուգաչափված(ստուգաչափումը հավաստող փաստաթղթերը պետք է ներառված լինեն հայտում և կցված լինեն սույն հրավերի հավելված 1-ին՝ հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմումին(հիմք՝ ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 11-ի N 113-Ն որոշում)), ընդ որում՝ ստուգաչափումը պետք է իրականացված լինի մինչև սույն հրավերով սահմանված հայտերի բացման վերջնաժամկետը:

10. Կատարողը պետք է տրամադրի համապատասխան երաշխիքային ժամկետներ, որոնց մասով նվազագույն պահանջները բերված են ստորև(այն տողերի մասով, որոնց համար երաշխիքային ժամկետ հնարավոր չէ սահմանել՝ պետք է ներկայացվի համապատասխան տեղեկանք հիմնավորում):

Երաշխիքներ՝ կատարված աշխատանքների համար 6 ամիս, պահեստամասերի համար 6 ամիս, եթե չի խախտվել ավտոմոբիլի շահագործման կանոնները:

11. Բոլոր ծառայությունները պետք է մատուցվեն նույն հասցեում՝ Երևան քաղաքի վարչական տարածքում:

12. Ավտոպահեստամասերը պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:

Նախ, հստակ երևում է, որ ներկայացված պահանջները վերաբերում են Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման կայանից պահանջվող տեխնիկական պահանջներին, բացի դա կատարող բառը գրված է միայն պահանջների 1-ին կետի համար, այսինքն հրավերով սահմանված կարգով մասնակիցների մոտ չի կատարվել համապատասխան անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և մասնագիտական անձնակազմի վերաբերյալ ստուգումներ, չի պահանջվել ներկայացնել որևէ փաստաթղթեր և այլն: Մնացած բոլոր կետերի պահանջները ներկայացվել են եղել ավտոմեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման կայանին, այլ ոչ թե կատարողին: Այս պարագայում կարծում եմ Պատվիրատուն, ինչպես նաև պատվիրատուի կողմից պատասխանատու ստորաբաժանման և գնահատող հանձնաժողովի անդամները ունեն իրավունք ստուգելու հայտ ներկայացրած ցանկացած մասնակցի համապատասխանությունը հրավերի պահանջներին, քանի որ հենց տվյալ ստորաբաժանումների վրա է դրված ամբողջ պատասխանատվությունը մասնակցի՝

հրավերի պահանջների համապատասխանության, ինչպես նաև պայմանագրի կատարման փուլում կատարողի՝ պայմանագրով սահմանված պահանջների, պայմանների համապատասխանության և պարտավորությունների կատարման ստուգման և ընդունման համար:

Ինչ վերաբերում է այն փաստարկին, թե «Կատարողին ստուգաչափում անցած տարան անհրաժեշտ է լինելու միայն իր պայմանագրային պարտավորության կատարման փուլում, ինչն ամրագրված է հենց ընթացակարգի պայմանագրի նախագծին կից հավելված 1-ի տեխնիկական բնութագրով, որտեղ խոսքը գնում է կոնկրետ պայմանագրի կատարողի մասին, և մասնակցի հայտը մերժել այն հիմնավորմամբ, որ ստոգաչափման փաստաթուղթը ամսագրված է ոչ թե մինչև հայտերի բացման վերջնաժամկետի ամսաթվով՝ 19.12.2019, այլ շտկում կատարելու ամսաթվով՝ 24.12.2019թ., գտնում ենք իրավաչափ չէ», հայտնում եմ հատկյալը.

Ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ յուրաքանչյուր մասնակից, առանց ուսումնասիրելու հրավերի տեխնիկական բնութագիրը կարող է մասնակցել ընթացակարգին և հետագայում մեծ զարմանք ապրել այն փաստից, որ իր կողմից ներկայացված հայտը մերժվել է: Այս պարագայում մասնակիցը հնարավոր է նաև ուսումնասիրած չլիներ Ընթացակարգի պայմանագրի նախագծին կից հավելված 1-ի տեխնիկական բնութագրով սահմանված բոլոր պահանջները, և չհամապատասխաներ ոչ թե միայն 9-րդ կետի պահանջներին, այլ նաև ներկայացված այլ պահանջների: Հարգելի բողոքը քննող անձ, կարծում եմ, որ հրավերի տեխնիկական բնութագրի ուսումնասիրությունը դա մասնակցի գլխավոր պարտականությունն է, քանի որ առանց վերջինիս ուսումնասիրության հրավերին մասնակցելը կարող է հանգեցնել մեծ խնդիրների և պատճառաբանել, որ ուսումնասիրվել է միայն հրավերի 1-ին գլխի 4-րդ մասի 4.3 կետի պահանջները, այդքան էլ իրականությանը համապատասխանող չէ: Ընթացակարգի հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության բոլոր պահանջներին համապատասխան, ասեմ ավելին՝ ՀՀ ոստիկանության կողմից հաշվի առնվելով այն հանգամանքը, որ ընտրված մասնակից ունենալու պարագայում մասնակցի կողմից պետք է տրվի որակավորման և պայմանագրի ապահովումներ բանկային երաշխիքի տեսքով, հրավերի 1-ին մասի 10-րդ գլուխն ամբողջությամբ ենթարկել է փոփոխությունների, այն մասնակիցների համար հնարավորինս պարզ և հասկանալի դարձնելու համար, քանի որ տվյալ գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է 104 000 000 /մեկ հարյուր չորս միլիոն/ ՀՀ դրամ: Բացի դա, անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ

Գարանտսերվի ՍՊԸ-ի կողմից 10.12.2019 թվականին ուղարկվել է պարզաբանման հարցում /կցվում է/, որին ՀՀ ոստիկանությունը պատասխանել է անմիջապես /կցվում է/: Կազմակերպության կողմից ուղարկված հարցումը հենց վերաբերում էր պայմանագրի կնքման դեպքում պահանջվող որակավորման և պայմանագրի ապահովումներին, ինչից կարելի է հստակ եզրակացնել, որ մասնակցի կողմից հրավերրի ամբողջական ուսումնասիրություն այնուամենայնիվ կատարվել է: Բացի դա կարծում եմ, որ հրավերի ուսումնասիրության պարագայում, հարցեր առաջանալու դեպքում, կարելի էր Գարանտսերվիս ՍՊԸ-ի կողմից 10.12.2019 թվականիներկայացված պարզաբանման հարցման մեջ ներառել նաև հրավերի տեխնիկական բնութագրի վերաբերյալ անհասկանալի կամ պարզաբանման ենթակա հարցեր, որից հետո միայն բողոքաբերին իրավունք կվերապահվեր խոսել իր կողմից վկայակոչված հրավերի տեխնիկական բնութագրում առկա թաքնված պահանջների վերաբերյալ: Նման հարցադրումների բացակայության պարագայում կարելի է հանգել այն եզրահանգման, որ Գարանտերվիս ՍՊԸ-ն լիարժեք ուսումնասիրելով հրավերը և նրանում առկա տեխնիկական բնութագրի պահանջները, և չկարևորելով տեխնիկական բնութագրում առկա պահանջները, մասնակցել է ընթացակարգին, առանց հետևանքների մասին մտածելու:

Ինչ վերաբերում է Գարանտսերվիս ՍՊԸ-ի կողմից ներկայացված լրացուցիչ փաստարկներին այն մասին, որ կազմակերպությունը պայմանագրային պարտավորությունները կատարելու էր «ինգլիշթրեյդ հաուզ» ՍՊԸ-ի կողմից իրեն մատակարարված շարժիչի և տրանսմիսիոն յուղերի օգնությամբ, որոնք արդեն իսկ մակնշված են, հայտնում ենք, որ ընթացակարգի հրավերով առհասարակ չի պահանջվել ներկայացնել օգտագործվող պահեստամասերի, յուղերի և այլ դետալների տեխնիկական բնութագրեր, և հետևաբար գնահատող հանձնաժողովը նման ուսումնասիրություններ չի կատարել և անգամ կատարելու իրավունք նրան վերապահված չէր: Կարծում եմ այսպիսի փաստարկ կատարելու կարիք անգամ չկար:

Ինչ վերաբերում է Գարանտսերվիս ՍՊԸ-ի կողմից վկայակոչված այն փաստին, որ մի քանի հրապարակում կատարվել է որոշակի ուշացումներով, ապա դրանք տեխնիկական խնդիրներ են, որոնց արդյունքում հավաստիացնում ենք, որ ոչ մի մասնակցի շահ չի ոտնահարվել, և ընթացակարգի մասնակիցները լիարժեք տեղյակ են եղել ընթացակարգի հետագա ընթացքից, և հատկապես այդ ամենի մասին տեղյակ է եղել բողոքաբերը, ով շուրջօրյա զանգեր էր կատարում: Ավելին, եթե մասնակիցը ցանկություն ուներ միայն իր շահերը պաշտպանելու, այլ ոչ թե գնման ընթացակարգը կասեցնելու և ՀՀ ոստիկանության

աշխատանքները կաթվածահար անելու, ապա կարող էր իր կողմից 30.01.2020 թվականին ներկայացրած բողոքը ներկայացներ ցանկացած պահի, սկսած 13.01.2020 թվականից, երբ հրապարակվել են ուշացած արձանագրությունները, այլ ոչ թե բողոքարկերանգործության ժամկետի ավարտից ընդամենը մեկ օր առաջ:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ չբավարարել Գարանտսերվիս ՍՊԸ-ի կողմից 30.01.2020 թվականին ներկայացրած բողոքը, քանի որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշումներ կայացնելիս հիմնվել է հրավերի և գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների վրա և նշված պահանջների խախտում գնահատող հանձնաժողովի կողմից տեղի չի ունեցել:»:

4. <u>Բողոքարկման ընթացակարգի կողմ՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքաբերի 05.02.2020թ.-ի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 07.02.2020թ.-ի թիվ ԲՔԱ-ԼՕ/1/1555-2020 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ նաև՝ Ծառայություն):

Ծառայությունը լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստերին, ներկայացրել է գրավոր դիրքորոշում և հայտնել հետևյալը.

ՀՀ պետական վերահսկողական ծառայության ներկայացուցիչը հայտնել է, որ Մասնակցի կողմից Հրավերով սահմանված պահանջներին համապատասխան ներկայացվում է դիմում-հայտարարություն, որում հստակ նշվում է, որ մասնակիցը՝ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն, հայտարարում և հավաստում է, որ բավարարում է ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-ՏՍԿ-ՃՈ-2020/Ա-22 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում սահմանված ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում: Հրավերով նման պահանջ սահմանված է, որը վերջինիս անբաժանելի մասն է կազմում, այն է, որ ավտոտեխսպասարկման կայանում ծավալային տարրաները պետք է ունենան ստուգաչափման վերաբերյալ փաստաթուղթ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ և ստուգաչափումը պետք է իրականացված լինի մինչև հայտերի բացումը: Հրավերի առաջին նախադասությամբ հստակ սահմանված է, որ Մասնակիցը նախքան հայտ կազմելը և

ներկայացնելը պետք է մանրամասնորեն ուսումնասիրի հրավերը, քանի որ վերջինիս չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման: Եթե մասնակցի կողմից ամբողջությամբ ուսումնասիրվել է հրավերը և խնդիր չի եղել ստուգաչափման փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, հետևաբար անհրաժեշտ էր սահմանված ժամկետում՝ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը իրականացված լիներ ստուգաչափումը: Ելնելով վերոգրյալից կարելի է ենթադրել, որ մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/07 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ ոստիկանության կողմից իր կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 03.12.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-ՏՍԿ-ՃՈ-2020/Ա-22» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 25.12.2019թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերի տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցի 9-րդ կետով նաատեսված՝ տարաների ստուգաչափման փաստաթուղթը: 23.12.2019թ.-ին «Գարանտսերվիս» ՍՊԸ-ին ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու համար, սակայն 24.12.2019 թվականին վերջինիս կողմից ներկայացված փաստաթուղթը չի համապատասխանել հավերի պահանջներին, քանի որ հրավերով պահանջվում էր, որ Ավտոտեխսպասարկման կայանում կիրառվող չափման համար նախատեսված բոլոր տեսակի ծավալային տարաները պետք է լինեն ստուգաչափված (ստուգաչափումը հավաստող փաստաթղթերը պետք է ներառված լինեն հայտում և կցված լինեն սույն հրավերի հավելված 1-ին՝ հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմումին (հիմք՝ ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 11-ի N 113-Ն որոշում)), ընդ որում՝ ստուգաչափումը պետք է իրականացված լինի մինչև սույն հրավերով սահմանված հայտերի բացման վերջնաժամկետը: Սակայն «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից փաստաթուղթը ներկայացվել է շտկման ամսաթվով, որով խախտվել է հրավերի

պահանջը: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է:

«ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-ՏՍԿ-ՃՈ-2020/Ա-22» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրի համաձայն՝ Կատարողը պետք է ունենա անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և մասնագիտական անձնակազմ, այդ թվում՝ ավտոտեխսպասարկման կայանում կիրառվող չափման համար նախատեսված բոլոր տեսակի ծավալային տարաները պետք է լինեն ստուգաչափված (ստուգաչափումը հավաստող փաստաթղթերը պետք է ներառված լինեն հայտում և կցված լինեն սույն հրավերի հավելված 1-ին՝ հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմումին (հիմք՝ ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 11-ի N 113-Ն որոշում)), ընդ որում՝ ստուգաչափումը պետք է իրականացված լինի մինչև սույն հրավերով սահմանված հայտերի բացման վերջնաժամկետը:

Հրավերով սահմանված հայտերի բացման վերջնաժամկետը սահմանվել է 19.12.2019թ.-ը:

Չափանոթ չափման միջոցի ստուգաչափման թիվ 026471 վկայականը ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից «Գարանտսերվիս» ՍՊԸ-ին է տրամադրվել 24.12.2019թ.-ին:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից 30.01.2020թ.-ի ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.2-րդ կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 8.9 կետով սահմանված դեպքի:

Նույն հրավերի 1-ին մասի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում

են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ ոստիկանության կողմից իր կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 03.12.2019թ.-ին հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-ՏՍԿ-ՃՈ-2020/Ա-22» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 25.12.2019թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերի տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցի 9-րդ կետով նաատեսված՝ տարաների ստուգաչափման փաստաթուղթը: 23.12.2019թ.-ին «Գարանտսերվիս» ՍՊԸ-ին ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու համար, սակայն 24.12.2019 թվականին վերջինիս կողմից ներկայացված փաստաթուղթը չի համապատասխանել հավերի պահանջներին, քանի որ հրավերով պահանջվում էր, որ Ավտոտեխսպասարկման կայանում կիրառվող չափման համար նախատեսված բոլոր տեսակի ծավալային տարաները պետք է լինեն ստուգաչափված (ստուգաչափումը հավաստող փաստաթղթերը պետք է ներառված լինեն հայտում և կցված լինեն սույն հրավերի հավելված 1-ին՝ հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմումին (հիմք՝ ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 11-ի N 113-Ն որոշում)), ընդ որում՝ ստուգաչափումը պետք է իրականացված լինի մինչև սույն հրավերով սահմանված հայտերի բացման վերջնաժամկետը: Սակայն «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից փաստաթուղթը ներկայացվել է շտկման ամսաթվով, որով խախտվել է հրավերի պահանջը: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է:

«ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-ՏՍԿ-ՃՈ-2020/Ա-22» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրի համաձայն՝ Կատարողը պետք է ունենա անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և մասնագիտական անձնակազմ, այդ թվում՝ ավտոտեխսպասարկման կայանում կիրառվող չափման համար նախատեսված բոլոր

տեսակի ծավալային տարաները պետք է լինեն ստուգաչափված(ստուգաչափումը հավաստող փաստաթղթերը պետք է ներառված լինեն հայտում և կցված լինեն սույն հրավերի հավելված 1-ին՝ հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմումին (հիմք՝ ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 11-ի N 113-Ն որոշում)), ընդ որում՝ ստուգաչափումը պետք է իրականացված լինի մինչև սույն հրավերով սահմանված հայտերի բացման վերջնաժամկետը:

Հրավերով սահմանված հայտերի բացման վերջնաժամկետը սահմանվել է 19.12.2019թ.-ը:

Չափանոթ չափման միջոցի ստուգաչափման թիվ 026471 վկայականը ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից «Գարանտսերվիս» ՍՊԸ-ին է տրամադրվել 24.12.2019թ.-ին:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Ընկերության կողմից չեն պահպանվել «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-ՏՍԿ-ՃՈ-2020/Ա-22» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջները, մասնավորապես՝ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից ավտոտեխսպասարկման կայանում կիրառվող չափման համար նախատեսված բոլոր տեսակի ծավալային տարաների ստուգաչափումը իրականացվել է հրավերով սահմանված հայտերի բացման վերջնաժամկետը (19.12.2019թ.) լրանալուց հետո՝ 24.12.2019թ.-ին, ուստի տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժելու մասին կայացված որոշումն իրավաչափ է և բխում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից, ուստի բողոքն անհիմն է և մերժման ենթակա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Գարանտսերվիս» ՍՊԸ-ի կողմից 30.01.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/07 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ